Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
P-33

19 NOV 20

891.542-3
Բ-33
01 JAN 2009
891.99
Բ-33

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ „ԴԷՊԻ ԼՈՅՍ“.

№ 2.

ԲԱՏՐԱԿ.

ԸՆԿԵՐ, ՄԻ՝ ԴԱՒԱՃԱՆԻՐ.

ԵՒ

Վ. Բերենշտամ.

ՊԱՏՒԻ ՀԱՄԱՐ.

Թարգմ.
ՍԱՐՏՕ.

1906.

01.03.2013
23796

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Մեր պարբերական հրատարակութիւնների մէջ, մօտ ապագայում կմտնի՝ Ս. ԲՕԳԴԱՆՈՎ-ի Տնտեսագիտութեան համառօտ ուսուցումը գիրքը, որը կազմած կլինի հնարաւորութեան չափ ժողովրդական լեզուով և բաղկացած հետեւեալ կարևոր գլուխներից։

1. Սկզբնական ցեղական կոմմունիզմը (հաւասարակութիւնը), 2. Նահապետական-ցեղական հասարակական կազմակերպութիւնը, 3. Հնադարեան ծորտութիւնը, 4. Փէօդալական հասարակութիւնը, 5. Մանր բուրժուական հասարակութիւնը, 6. Վաճառականական կապիտալի դարաշրջանը, 7. Արդիւնաբերական կապիտալիզմը, ա) Մանուֆակտուրային դարաշրջանը, և բ) Մեքենայով արտադրութեան դարաշրջանը։

Բացի դորանից գիրքը զարդարուած կլինի այլ և այլ պատմական պատկերներով։

Հրատարակելով այս գիրքը, որ բաղկացած կլինի մօտ 50 դրքոյկներից (իւրաքանչիւրը ոչ աւել քան 5 կոպ. արժողութեամբ) և կկրի՝ Բանւորական զրոյցները վերնագիրը, նպատակ ունենք ծանօթացնելու մեր բանւոր ընկերներին այն մեծայլ անցեալի պատմութեան և հասարակական այն ֆազիսների (զարգացման միջոցների) հետ, որը թողել է իւր հետեւից ներկայ հասարակական կապիտալիստական կարգը։

«ԴԷՊԻ ԼՈՅՍ».

Հրատարակութիւն „ԴԷՊԻ ԼՈՅՍ“
Издательство „ДЕПИ ЛУЙСЪ“
ԳՐԱԴԱՐԱՆ
ТИПОГРАФІЯ

ԸՆԿԵՐ, ՄԻ՛ ԴԱՒԱՃԱՆԻՐ.

(Տարէյիկբրեխերի հորդորանքը).

Մի անիր ոչ բրիչինոյն, ինչ չես ուզում որ քեզ անեն։
Ցս. Քս.

Լսիր, ընկեր...

Այդպէս ուրեմն, դու մերժեցիր մասնակցել մեր միութեան մէջ. դու չես ուզում մեզ հետ ձեռք-ձեռքի տուած առաջ ընդանալ այն հասարակական շարժման և ագիտացիայի գործում, որը ստեղծել ենք մենք ինքներս մեր կեանքի և աշխատանքի պայմանները մի որոշ չափով բարելաւելու համար. դու չես կամենում մեզ ընկեր լինել այն ընդհանուր կռւում, որը պարտաւոր է թեթեւացնել մեր դժբաղդ ու աղքատիկ կեանքի ծանրութիւնը։

Բայց, կարող է պատահել, որ կուզենաս լսել իմ այն խօսքերը, որոնցով մտադիր եմ դիմել քեզ և քո ականջներդ չես կլինի իմ արտասանած ճառի առաջ։ Շատ կարող է պատահել, որ քեզ բաւական կլինի քո համբերութիւնդ մէկ կամ երկու րոպէով և ինձ թոյլ կտաս արտասանել քեզ այն, ինչ որ մտածում և ձգտում եմ ապացուցել՝—քո մոլորութիւնդ և իմ ապացոյցներից բղխած ամբողջ շահը և ճշմարտութիւնը։ Այդպէս ուրեմն, լսիր։

Չէ՞ որ դու չես սկսի հերքել այն, որ արևը լուսաւորում է:

Երբ մեր գիւղում մենք միութիւն կազմեցինք, աշխատանքի պայմանները բարելաւելու նպատակով և համարեայ թէ բոլոր բանւորները ընդունեցին նրանում մասնակցութիւնը, դու ասացիր, որ այդ միութիւնը մի թակարդ է, որին պատրաստել են սոցիալիստները, մեզ, բոլոր բանւորներիս խաբելու համար, որ ոչ մի յոյս չկայ շուռ տալու և քո ցանկութեան համեմատ հիմնելու աշխարհը, որ այն ժամանակից ի վեր, ինչ գոյութիւն ունի աշխարհս, միշտ եղել են աղա-խաղէյիները և որ միշտ էլ նրանք կմնան, որ կատարելապէս յիմարութիւն է ձգտել մի որ և է հնարքով բարելաւելու մեր կեանքը: Բայց և այնպէս խորին ուշադրութեամբ նայիր քո շուրջդ և դու կտեսնես, որ թէպէտ և ոչ բոլոր բանւորները մասնակցել են այդ միութեան մէջ և հասկացել նրա անհրաժեշտութիւնը, բայց և այնպէս շատ բան է փոխուել մեր աչքի առաջ և որ այժմս կատարւում են նոքա միանգամայն ուրիշ ձևերով, քան այդ առաջն էր:

Առաջ գոյութիւն չունէր ոչ մի պայմանագիր, որը կանոնաւոր էր և ճշտութեամբ դնէր մեր աշխատանքը: Խաղէյիները, ինչպէս որ մեզ, այնպէս էլ մեր իրաւունքները ոչ մի բանի տեղ չէին դնում և իրենց խաղէյիներին էլ մենք հազիւ էինք կարողանում տեսնել՝ երեք ամառւայ ընթացքում՝ մէկ, երկու անգամ և այն էլ նրանց հետ խօսելը մեզ չէր թոյլատրւում: Պրիկազչիկ-կառավարիչները անսահման իշխանութիւն էին վայելում մեր անձի վերաբերմամբ: Մենք պարտաւոր էինք բաւականանալ ամենաբիչ վար-

ձատրութեամբը և լռութեամբ տանել մեզ ցաւ պատճառող բոլոր անարդարութիւնները:

Այժմ գործերը արդէն ուրիշ կերպարանք են ստացել:

Այժմ խաղէյիներից շատերը, անհրաժշտ են համարում, մեզ հետ բանակցութիւնների մէջ մտնելը, պայմանագրեր կազմելու համար, որոնց մէջ ամենապարզ և ճշգրիտ կերպով հիմնադրում են մեր բոլոր պարտաւորութիւնները և ամբողջ վարքը աշխատանքի ժամանակ: Նրանք սկսում են կամաց-կամաց անհրաժեշտ ճանաչել մեր աշխատավարձի աւելացումը:

Մեզ հետ այժմ վերաբերւում են անհամեմատ լաւ, քան այդ առաջն էր, և զանազան վիրաւորանքների թիւը կարծես թէ օր-օրի վրայ պակասում են մեր գլխներից: Առհասարակ սկսում են պատուել, յարգել մեր մարդկային արժանաւորութիւնները և մեզ հետ հաշիւների մէջ մտնել:

Եւ այս բոլորը եղաւ մի քանի ամսւայ ընթացքում, որ մեր կազմակերպութեան ու միութեան անմիջական հետևանքներն են: Իսկ դու չնայած այս բոլորին, գլխումը հոպհոպներ ունեցող մարդու պէս շարունակ պնդում ես, թէ՝ անկարելի է փոխել իրերի դրութիւնը մեր այս սպիտակ աշխարհում: Ասա՛ խնդրեմ, արդեօք սա նման չէ՞ նորան, եթէ ասես թէ՝ արևը երկնքից մեզ լոյս չէ տալիս:

Այդպէս ուրեմն, եթէ ճշմարիտ է այն, որ մեր միութեան օգնութեամբը մեզ յաջողւել է ձեռք բերել փոքր ինչ բան, հապա էլ ինչու համար, ասա տեսնեմ ընկեր, դու դարձեալ շարունակում ես հեռու պահել քեզ մեզանից:

Չլինի՞ մենք արժանի չենք քեզ ընկեր ունենա-

լու։ Ի՞նչ, միթէ դու էլ այնպիսի մարդ չես, ինչպէս որ մենք։ Բայց չէ՞ որ մենք, քեզանից Աստծուն անկարելի բան չենք պահանջում։ Մենք քեզ խնդրում ենք միայն չդաւաճանել մեր ընկերական գործին։ Հասկանո՞ւմ ես արդեօք այս խօսքերի ամբողջ նշանակութիւնը։ Գիտե՞ս թէ ինչ է նշանակում, պրոլետարիատի—ամբողջ բանւոր ժողովուրդի, գործին դաւաճանելը։

Դա նշանակում է սեփական կրծքովդ պաշտպանել խազէյինի շահերն ու իրաւունքները. դա նշանակում է խանգարել բանւորների ազատութիւնը. դա նշանակում է սեփական մարմնովդ կապել այն թշւառների փշալից ճանապարհը, որոնք կռւում են իրենց և թէ իրենց եղբայրների համար երջանիկ մի կեանք ստեղծելու։

Բայց դու պատասխանում ես, որ գնալով աշխատանքի, երբ ուրիշները ինքնակամ դորանից հրաժարւում են, դորանով բոլորովին չես ցանկանում վնաս բերել քո ընկերներիդ, որ հետևում ես միայն քո սեփական շահերին և ուզում ես ծառայել քո խազէյինիդ։

Բայց մտածենք մի փոքր և տեսնենք թէ ինչումն են կայանում քո ինտերեսներդ, ու շահերդ։

Նրանում, որ աշխատելով 8 և ոչ թէ 9 ժամ կարողանաս վաստակել 35-ի փոխարէն 40 սոլդ *), որ կարողանաս ունել չոր հացի փոխարէն մսալից կերակուրները և քնես կանոնաւոր մաքուր սենեակում, փափուկ մահճակալի վրայ, բրդեայ սաւանի տակը և ոչ թէ մութ ու հոտած կազարմաներում—ծղնոտների

*) Դա իտալական փող է, որի 1 սոլդը հաւասար է 1 1/4 կոպ.։
Ծան. Թարգ.

վրայ։ Այդպէս ուրեմն, գնալով աշխատելու, երբ քո ընկերներդ գործադուլ են անում, դորանով դու չես ծառայում քո ինտերեսներին, չես աշխատում սեփական շահերիդ համար. այդ էլ նրա համար, որ դորանից չի աւելանում քո աշխատավարձը, չի փոքրանում բանւորական օրդ և չի շատանում քո վաստակը. չնայած որ խազէյինդ օրական, նոյն իսկ մի քանի սոլդ էլ աւելի է նետում քո առաջ։ Բայց չէ՞ որ, դա քո դաւաճանութեան համար եղած վարձատրութիւնն է։

Ուրեմն, քո իսկական շահդ բոլորովին չէ կայանում նորանում, որ ճորտի նման ստորացած ծառայես խազէյինին և դաւաճանես քո աշխատանքի ընկերներին. այլ նորանում, որ այսօր էլ և վաղն էլ ապացուցես քո համերաշխութիւնդ նրանց հետ։ Չէ՞ որ եթէ նրանք իրենց վիճակի համար մի որևէ բարեփոխութիւն են նւաճում, դորանով նրանք բարեփոխում են և քո վիճակդ. չէ՞ որ քո ընկերներիդ միջոցաւ դուրս գծլած այդ բարեփոխութիւնները, ինչպէս օրինակ՝ աշխատավարձի աւելացումը, բանւորական օրի կրճատումը և այլն, դրանք խազէյինից կամաւոր ստացած նւէրները չեն դաւաճանութեանդ համար, այլ հիմնական և միշտ մնացող—նւաճումները։ Խազէյինին այլ ևս չի յաջողւի նրան մեզանից յետ խլելու, քանի որ այդ նոր նւաճած բարիքները պատկանում են ամբողջ բանւորական դասակարգին և ոչ թէ միայն քեզ։

Ընկերութիւնների և գործադուլների դէմ, ահա այսպիսի մի պատճառաբանութիւն էլ ես մէջ բերում, որ գործադուլ անելով միւս բոլոր ընկերներիդ հետ, դորանով այնպիսի մի վնաս ես բերում խազէյինիդ, որ նա շատ հաւանական է քեզ չի ների և կաշխատի

վրէժխնդիր լինել, երբ որ դու նրա օգնութեանը կարօտ կլինես։

Քո այդ սարսափները վերին աստիճանի չափազանցրած են. այն պատճառով որ, քո գործադուլ չանելդ նորա համար նշանակութիւն չունի, քանի որ դու չես կարող բաւարարեցնել նորա ընդհանուր պահանջները. իսկ երբ դուն էլ միւսների հետ գործադուլ ես անում, այն ժամանակ կորչում է քո անհատական նշանակութիւնը և առաջ գալիս միմիայ ընդհանրութիւնը։ Էլ ինչու համար, ասա խնդրեմ, նորա վրէժխնդրութեան առարկան միմիայն քո ընտանիքը պէտք է լինի։ Իսկ յետոյ դու ինքդ նկատիր՝ չէ՞ որ այն բոլորը, ինչ որ մենք ձեռք ենք բերում, բարելաւում է մեր աշխատանքի պայմանները և ազատում մեզ մի կտոր սև հաց ստանալու համար խաղէյինի ոտների տակ ընկնելուց։ Մեր ծանր աշխատանքը պէտք է այնպէս վարձատրի, որ մեր ընտանիքները ունենան ձմեռայ դոնէ անհրաժեշտ մթերքներ սովից չմեռնելու համար, որ մենք ստիպուած չլինենք ստորանալ, ծունր չոքել, աղերսել խաղէյինին, որ նա մեզ մի մեշոկ ալիւր կամ ցորեն տայ։

Քահանան—խաբեբայ է։

Վերջապէս գործադուլի դէմ ես դու և՛ նրա համար, որ ըմբռստութեամբ իբր թէ ոչ օր ոչինչին չէ հասել և ոչ էլ թէ կհասնեն։ Դու ասում ես, որ լաւ է սպասել այն ժամանակին, երբ աղաները իրենց կամքով կտան մեզ այն, ինչ որ մենք հիմայ պահանջում ենք նրանցից, որ այդ զիջումներին պէտք է միայն սպասել, չդիմել ոչ մի գործադուլին, ոչ մի սպառնալիքներին քանի որ բոլոր եղածները լաւ են և խելացի, և որ մեղք է դրանց մէջ մի օրև է փոխութիւն մտցնելը, որովհետև դա նշանակում է գնալ Աստծոյ դէմ, նորա սուրբ կամքի դէմ։

Քահանան, որը քեզ այդպիսի խոնարհութիւն է քարոզում, ծածկում է քեզանից այն բոլոր թոյները, որով նորա եկեղեցին և քահանայական ամբողջ շայկան թունաւորեց մեզ, պատմութեան ամբողջ ընթացքում։ Ո՞րքան արիւնալից ճակատամարտներ, մարդկային, որպիսի՞ զոհեր եղան այդ եկեղեցու անկուշտ ձգտումները իրականացնելու համար։—Մարդկային դիակների վրայ անցնելով ձեռք բերել երկրային տիրապետութիւնը, իշխանութիւնը,— ահա այն հաւատը որով ղեկավարւում է մեր խաբեբայ-աւազակը։ Խոնարհութիւնը—յիմար գաղափար է. ճորտային հնազանդութիւնը—անբարոյականութիւն և Քրիստոսի ուսուցման ու հաւատին դէմ։

Խաղաղութիւն և հանգիստ նայել այս աշխարհում թագաւորող անարդարութեանը։ Քո հիւանդ ու աղքատ զաւակներիդ տանջանքները տեսնել այնպիսի մի ժամանակ երբ հարուստներն ու երջանիկները քաղցրանում են կեանքի բարիքներովը։ Լռութեամբ խոնարհեցնել գլուխդ մի որ և է պրիկաղչիկի կամ վերակացուի ամենակարողութեան առաջ. սուս ու փուս տանել նորա բոլոր հայհոյանքները և դառնութեամբ դիմել աշխատանքին, առաջուց համաձայնելով երկրի բարիքների ոչ հաւասար բաժանելուն. բարիքների, որ ձեռք են բերում մեր սեփական դժուար և ծանր աշխատանքովը։

Ո՛չ. այս բոլորը հեռու է քրիստոնէութիւնից, քանի որ Քրիստոսի վարդապետութիւնը, նորա ամբողջ մտքերը, ամբողջ սէրը դէպի տանջուող մարդը, թռաւ և տարածուեցաւ մեր այս աշխարհում, որ-

պէս մի բողոք անհատակ ճնշումների և անարդարութիւնների դէմ, որով ցեխոտւում էր այն ժամանակւայ մարդկութիւնը։

Ինքը Քրիստոսն ասաց, որ նա բերեց աշխարհին ոչ թէ խաղաղութիւն, այլ—սուր։ Եւ իւր վարդապետութեան այդ սրովը, տանջւածներին անվերջ սիրելովը, նա ճորտութեան դէմ պատերազմ դուրս եկաւ։ Թէպէտ և շատ դարեր են անցել այն օրից, բայց և այնպէս վերջ ի վերջոյ ճորտութիւնն ընկաւ։ Ընկաւ նա Քրիստոսի սրի հարւածների տակ։

Այդպէս ուրեմն, չպէտք է խաղաղութեամբ սպասել թէ երբ աղա-խաղէյինները իրենց բարի կամքով կբարեհաճեն մի փոքր լաւացնել մեր դրութիւնը։ Պէտք չէ տէր-տէրների խորհուրդներին լսելը, քանի որ նրանք էլ միևնոյն բանն են կամենում, ինչ որ խաղէյինները՝ այն է, որ դու միշտ նրանց ոտքերի տակ ընկած լինես։ Ո՛չ, պէտք է դաս մեզ հետ, մեր մարտիկների հետ, որպէսզի միացած ոյժերով, մէջք-մէջքի տւած կբռւենք հասարակական բոլոր անարդարութիւնների դէմ. անարդարութիւնների, որով ճնշում են մեզ, բանւորներիս և մեր կեանքի տանջանքներից ու վշտերից, ողբի հովիտներ կազմում։

Ընկնը, մեր անգին եղբայր—մի՛ դաւաճանիր մեզ։

Ուրեմն լսիր ինձ ընկեր, լսիր իմ այս խօսքերը և հաւատայ, որ քո ինտերեսներդ, քո շահերդ և քո պարտքդ պահանջում է քեզանից որ օգնութեան ձեռք կառկառես քո դժբաղդ եղբայրներին։ Նախ քան վերջնականապէս մի որև է բան վճռելը, քո ու եղբայրներիդ դործին դաւաճանելը, նախ քան մատ-

նիչ Ցուդա, շարէյիկբրեխեր լինելդ, կանգնիր, մտածիր և լաւ մտածիր քո անելիքներիդ մասին։

Ցիշիր որ միւս ընկերներիդ նման դուն էլ նոյն տեսակ թշւառն ես, որ քո բաղդդ էլ նոյնպէս դաժան է և մռայլ, որ քո ձեռներդ էլ նոյնպէս պնդացած են աշխատանքից և կոշտերով ծածկւած, որ քո խրճիթումն էլ ոչ ամեն օր կարողանում ես կուշտ կերակրւել, որ խաղաղութիւնը և համաձայնութիւնը ոչ ամեն ժամանակ թագաւորում է քո ընտանիքում, որ վիշտը և կարիքը քեզ համար էլ նմանապէս իրենց հետ են բերում ընտանեկան անբաւականութիւնները, խռովութիւնները, դանդատները և հանդիմանութիւնները։ Ցիշիր վերջապէս, որ դու ինքդ էլ, ինչպէս էլ որ քեզ չանւանեն, որ կողմից էլ որ եկած չլին ես, ինչով էլ որ չպարապ ես—բաւական է որ բանւոր ես և այն էլ գիւղական բանւոր, վարձու բատրակ, դու տանջւում ես, չարչարւում այս աշխարհում և հենց դրա համար էլ դու պարտաւոր ես քո մէջ կրքային ցանկութիւն զգալու, քո այդ դառը վիճակդ, կեանքիդ չարքաշ պայմաններդ, փոխելու համար։

Այդպէս էլ քո բոլոր ընկերներդ են, որոնք ցաւակցութեամբ են նայում քեզ վրայ, երբ դու դերանդին ուսիդ ձգած դնում ես բանելու այն ժամանակ, երբ դործադուլ են յայտարարում նրանք։ Չէ՞ որ այդ բոլորն էլ նոյն դժբաղդ, աղքատացած ժողովուրդն, որոնք և՛ կռւում են, և՛ զարկւում, և՛ դործադուլներ անում, իրենց դառը վիճակը բարւոքելու համար։ Մի՛ մատնիր, մի՛ դաւաճանիր նրանց այդ դործին։ Օ՜... ո՜... բանւոր եղբայր, մի՛ արատաւորիր խիղճդ և եղբայրասպան դործեր մի՛ անիր։

Աչքերդ մի՛ փակիր, նայիր քո առաջդ է վերա-

ծնուում նոր, չտեսնուած աշխարհը։ Նայիր քո ընկերներիդ, նրանք արդէն կարողացել են միանալ մէկ ընդհանուր դրօշի տակը։ Նայիր, տես թէ ինչպիսի վեհանձնութեամբ է փռփռում արիւնաներկ այդ կարմիր դրօշակը։ Լսիր, թէ ինչպիսի զարդանդ երգեր են դուրս ժայթքում նրանց տանջուած կրծքի խորքերից։— Նրանք հաց, ընկերութիւններ և խաղաղ կեանք են պահանջում առանց մի որև է խղճի խայթոցի։

Անհաւատարմութեամբ և վախկոտութեամբ մի նայիր այդ ժողովուրդին. նա քեզ բարի կամեցողութեամբ է իրեն մօտ հրաւիրում, որպէսզի ամուր սեղմի քո ընկերական ձեռքը և քեզ հետ հաւասար բաժանի ընդհանուր վիճակի ծանրութիւնը։

Ցամաք ընկեր, մի սոսկիր նրանց երկար սպասելու։ Թող աշխատանքդ, թող խաղէյինիդ այն դաշտը, որի ակոսների տակ թափեցին իրենց դործիքները, և դործադուլ յայտարարեցին։ Թող այն դործարանը, որին կապում է քեզ քո խաւարամտութիւնը և եսասիրութիւնը ու դնա ընկերներիդ հետ։ Նրանք կանչում են քեզ, դնա նրանց մօտ, նրանց հետ կատարիր քո մարդկային—բանւորական պարտքերդ։

Եթէ դու չես լսի իմ այս խորհուրդներին և դարձեալ կշարունակես ապրել քո ընկերներիդ դաւաճանելովը, այն ժամանակ խղճիդ վրայ կզդաս քո սեփական սիաներիդ ամբողջ ծանրութիւնը։ Քո ընկերներից նրանք, որոնք աւելի դործունեայ, եռանդոտ և անդուսպ են, քեզ դործից հեռացնելու համար կարող են զանազան միջոցների դիմել և գուցէ նոյն իսկ ինչպես են էլ քո անձնական դոյութիանը, որի համար և նրանց կարող են ձերբակալել, դատի ենթարկել, բանտարկել և նոյն իսկ կախաղան հանել։

Կողքան այն ժամանակ մայրերը, կուլան նրանց ամուսինները, կտանջեն նրանց անմեղ երեխաները և քո հոգին էլ, այս բոլոր տանջանքներից կխաւարուի վշտով և կսկսի տանջել քեզ քո խիղճը։ Բայց ոչ մի հանդստութիւն դտնել դու այլ ևս չես կարող։

Իսկ եթէ դու բաց կանես քո սիրտը և իմաստութիւնը եղբայրական զդացմունքներով, կնուիրես պարտականութիւններիդ իրականացմանը, այն ժամանակ զդւանքով կմօտենաս քեզ դայթակղեցնող հրապուրանքների բաժակին ու թողնելով այսքան տարիներ շարունակ սեփական քրտինքով ջրող աղայիդ դաշտերը,—կմիանաս դործաթող արած բանւորների ահագին բանակի հետ։ Մինչև վերջը կատարելով ընկերական պարտականութիւններդ, դիշերը տուն վերադառնալիս, հանդիստ և մաքուր սրտով կասես քեզ դիմաւորող ընտանիքիդ։

«Զաւակներս, սիրելի ամուսին այն հացը, որը պէտք է այսօր բերէի ձեզ համար, հազարաւոր իմ և ձեր ընկերների արտասուքներով էր ողողած։ Այն փողը, որը պէտք է վաստակէի ես այսօր իմ ընկերներիս դաւաճանելովը,—անէծքով էր նա կնքած։ Եւ ես դերադասեցի վերադառնալ տուն այս չոր հացի կտորով, այս համեստ ընթրիքով։ Թող նա հասարակ լինի, միայն թէ հանդիստ խղճով կարողանանք ուտել նորան։ Ես ուզեցայ այսօր բաժանել իմ ընկերներիս դառը վիճակը, այն ընկերներիս, որոնք ապստամբել են և ծեծւում են մեր ընդհանուր դործի համար։ Ես համոզուած լինելով, որ իմ վարմունքովս չեմ հակասում մեր ընկերական ընդհանուր պարտականութիւններին, յոյսով եմ որ դուք էլ չէք յանդիմանի ինձ

և ինձ հետ միասին կնեղուէք մի փոքր, մինչև գործադուլի վերջանալը»։

Եւ այն ժամանակ, քո որդիքդ էլ, կնոջդ հետ միասին, դուրդուրանքների և համբոյրների տարափով կծածկեն քո պարզ ճակատը։

Ընկերը, մեր եղբայրը, մի դաւաճանիր մեր ընդհանուր գործին։

Ս. Պետերբուրգ.
1906 թ.

ՊԱՏԻՒ ՀԱՄԱՐ.

(Փաստաբանի յիշատակարանից)։

Ընդունարանումն է՝ քաղաքավարի հագնուած երիտասարդ պարոնը։ Նորա երեսը չոփուռ է, երկար և ադեղ, մուգ-շիկագոյն մազերով և միրուքով, բայց լայն ճակատով ու խելացի արտայայտող աչքերով։ Նա նստած լրագիր է կարդում, իսկ ձեռքերը սպիտակ մանժետներում անցրած՝ դողում է։

— Դուք, ինչ գործով էիք։

— Ես Վասիլն եմ, ծառայում էի մօտ երեք տարի պոդմաստերի (վարպետի օգնական) պաշտօնով, Մունդեր և ընկ. ջուլհակի գործարանի ներկարարական բաժնում։ Ինձ վիրաւորեց կառավարիչը...

— Մի յուզուէք։ Պատմեցէք։

— Ներկարարական բաժնում իմ ձեռքի տակն էին աշխատում 8 բանւորները։ Գարնանը դրանցից երկուսին զինւորական կրկնողութեան տարան։ Այդ տեսակներին հաշիւ տալ չէ կարելի, և անպատճառ պէտք է նորից ծառայութեան ընդունել։ Մեր կառավարիչն էլ դրանց փոխարինելու համար ուրիշներին վարձեց, որոնք լաւ աշխատող բանւորներ էին։ Երբ որ առաջինները վերադարձան, ես չուզեցայ, որ նոր ընդունածները անգործ մնան։ Ես դիմեցի կառավարչին և խնդրեցի, որ բոլորին էլ թողնի իրենց պաշտօններում։ Նա համաձայնւելով դորան պատուիրեց,

որ դրանցից երեք բանուորներին, բացի ամբողջ օրան աշխատանքից, բանեցնեմ և՛ ամբողջ գիշերը, մինչև գիշերային աշխատաժամերի կանոնաւորումը։ Դա ի հարկ է անկարելի մի բան է։ Ես չէի կարող և ոչ էլ թէ կարող եմ զրկել քնից ու հանգստութիւնից այդ հալ ու մաշ եղածներին և ստիպել 24 ժամ շարունակ աշխատել այն նեխուած և հակառողջապահական աշխատանոցում, որպիսին է ներկարարական բաժինը։

Մեզ մօտ, բացի պայմանաժամից դուրս աշխատանքի, 11½ ժամ. բանուորական օր է։ Աշխատանքը շատ ծանր է։ Ես էլ դրանց արձակեցի տուն չկատարելով կառավարչի պատուէրը։ Միւս օրը առաւօտեան եկաւ կառավարիչը և տեսնելով իմ արարքը սկսեց բղբղալ ու բացատրութիւն պահանջել թէ՝ ինչու։—Ես կարծում եմ որ—ասացի—այդ չափ աշխատանքը, իրականից դուրս մի բան է և... —«Կարծում են միայն հնդուհաւերը և քեզ նման յիմարները»—որոտաց նա։ —«Մեզ կարծողներ հարկաւոր չեն այստեղ։ Դուք եկել էք իրականացնելու մեր պատուէրները և ոչ թէ կարծելու։ Ականջներիցդ բռնած բանուորական դրութիւնից, քաշեցինք պոդմոստեր դարձրինք ու հիմայ դունչդ վերը ես ցցում։ Ես ինձ պահելով պատասխանեցի հանդարտութեամբ։ — Պարոն կառավարիչ, եթէ ես անպէտք եմ, կարող էք ինձ հաշիւ տալ. իսկ հայհոյելու համար ես ձեզ իրաւունք չեմ տալիս։ Այս խօսքերից յետոյ նա կատաղեց և սկսեց հայհոյանքների տարափ թափել ինձ վրայ, որոնց մոտաբերելն անդամ չեմ կարող։ Ես, իհարկ է իսկոյն հաշիւ պահանջեցի։ Չի կարելի արդեօք, որ այդ գաղանին ինձ անպատուելու համար, դատի ենթարկենք։ Նրա

գործն է միայն ձեռքերը գրպանում դարսած սրանների հայհոյելը, իսկ եթէ մի բան էլ կասես, նրա ապտակից երեսդ կսկսի դաղել։ Միայն ինձ չհամարձակեցաւ...

— Վկաներ կա՞ն։

— Ինչպէս չէ. ամբողջ արհեստանոցը։

— Բայց դատի կերթա՞ն։ Կարծեմ որ կվախենան և կասեն, որ ոչինչ չեն տեսել և ոչ էլ թէ լսել։

— Օ՜, ոչ, բոլորը կերթան։ Պաշտօնեներիցը կզրկուեն և կերթան ճշմարիտն ասելու։ Չէ՞ որ նրանք հասկանում են իմ նրանց կողմը լինելս։

Դատարանում վկայ-բանուորները բարեխղճութեամբ պատմեցին գործի ինչպէս եղածը, որ և հաշտարար դատաւորը կառավարչին հինգ օրեայ բանտարկութեան դատապարտեց։

Բայց աւա՜ղ...

Վասիլևը մտաւ ինձ մօտ և յայտնեց, որ բոլոր վկայ եղած բանուորները, դատավճռի հէնց միւս օրը զրկուել են իրենց պաշտօններից։ —«Երևակայեցէք մի բոպէ»— ասաց նա. —«ոչ մէկն էլ չէ բողոքում դորա դէմ. իսկ նոքա 6 հոգի են, առանց մի որևէ ապահովութեան։ Ինձ ասացին որ ես աշխատեմ գործ ճարել թէ իրենց և թէ ինձ համար»։

Անցաւ մօտ երկու ամիս։

Անպատուութեան այդ գործը կառավարչի ցանկութեամբ կրկին անցաւ հաշտարարի ժողովում, նորից քննելու համար։ Եւ ահա մտնում է իմ կաբինետս մի երիտասարդ բանուորուհի, որ իրեն Վասիլևի քոյր անուանեց։

— Մունդեր-ի գործարանում— հաղորդեց նա —սկսեց «բունտ»-ը, թռուցիկներ երևան եկան,

ոստիկանութիւնը իրեն յատուկ նշաններով ձերբակալեց բոլոր կասկածաւորներին, յետոյ գեմելով կառավարչին խնդրեց իմանալ գործի բոլոր սկզբնապատճառ եղողների ազգանունները։ Եւ ահա բանտարկեցին եղբօրս, իրեն բանւորների հետ միասին։ Խընդրում եմ պարոն փաստաբան ինձ մէկ միջոց ցոյց տալ եղբօրս հետ տեսնուելու համար։

Ես սովորեցրի նորան ինչ անելը և խոստացայ շտապեցնել եղբօր դատը։

Հաշտարարի ժողովում, գործը անցել էլ առանց վկաների, որովհետև կառավարիչը, որպէս գանգատաւոր անձ, մերժել էր նրանց հարցաքննութիւններ անելուց։

Ժողովը վճռել էր, վերացնելով բանտարկութիւնը, տուգանքի ենթարկել նորան 50 ռուբ.։

Իսկ Վասիլևը աքսորուեց իրեն հայրենիքը։

Ս. Պետերբուրգ.
1905 թ։

Ռոստով Դոնի վրայ.
Տպարան «Դոնսկայա Ռեչ»

Ростовъ на Дону.
Типографія „Донская Рѣчь“

Վաճառվում են «ԳԷՂԻ ԼՈՅՍ»-ի հետևեալ հրատարակութիւնները՝

№ 1. Ազիանի. Խաբուած յոյսեր. կոմ. 2 ար. Թիֆլիսի իրական կեանքից . . . . 15 կ.

№ 2. Բատրակ. Ընկեր, մի դաւաճանիր,
Վ. Բերենշտամ. Պատի համար . . . . 5 կ.

Տպագրւում է և շուտով լոյս կտեսնի՝

№ 3. Պ. Լաֆարգ. Ծախուած աբորժակը։

Գրավաճառներին 25% զեղջ։

Դիմել հետևեալ հասցէով՝
Нахичевань н/Д. 1-ая Вознесенская № 57.
Н. Осипову.

«Ազգային գրադարան»
NL0326884

23.796